ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ[1]

Հայ Կաթողիկէ Առաջնորդության Վարքականոնը պահանջում է Առաջնորդության բոլոր ներկայացուցիչներից՝ ներառյալ հոգևորականներից, կրոնավորներից, տնօրեններից, կամավորականներից և աշխարհական աշխատակիցներից, պահպանել գործարար և անձնական էթիկայի բարձր չափանիշներ՝ իրենց պարտականություններն ու պատասխանատվությունն իրականացնելիս: Եկեղեցու բոլոր ներկայացուցիչները պետք է դրսևորեն ազնվություն և բարեխղճություն՝ իրենց պարտականությունները կատարելիս և համապատասխանեն բոլոր կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին:

Իրավախախտումների մասին զեկուցելու քաղաքականության նպատակներն են՝ սահմանել կանոններ և ընթացակարգե՝ր հետևյալի համար.

- Եկեղեցու շահագրգիռ անձանց կողմից կասկածելի ֆինանսական կամ իրավական հարցերի, Վարքականոնի, Արևելյան Եկեղեցիների Կանոնագրքի խախտումների և դրանց վերաբերյալ կասկածների, ինչպես նաև այլ մտահոգությունների մասին գաղտնի և անանուն հիմունքներով հայտարարություններ ներկայացնելը.

- Կազմակերպության կողմից ստացված բողոքների ընդունումը, պահպանումը և վարումը.

- Մտահոգությունների (իրավախախտումների) մասին զեկուցող ցանկացած անձի պաշտպանությունը հալածանքներից և վրեժխնդիր գործողություններից:

Զեկուցելու պարտականությունը

Առաջնորդության յուրաքանչյուր ներկայացուցիչ պարտավոր է սույն քաղաքականության համաձայն զեկուցել՝

ա) կասկածելի կամ անպատշաճ հաշվապահական կամ աուդիտորական հարցերի,

բ) Առաջնորդության վարքականոնի խախտումների և դրանց վերաբերյալ կասկածների,

գ) ֆինանսական, իրավական կամ կանոնական այլ մտահոգությունների մասին (այսուհետ միավորված ձևով՝ «Մտահոգություններ»):

Մտահոգությունների վերաբերյալ զեկույցները պետք է ներկայացվեն եպիսկոպոսի կողմից նշանակված առաջնորդական անձնակազմին (այսինքն՝ Ընդհանուր Փոխանորդին, Դիվանապետին, Իրավաբանին, Գլխավոր Հաշվապահին կամ ներքին աուդիտորին): Բոլոր Մտահոգությունների մասին պետք է զեկուցվի

[1] Սույն փաստաթուղթը մշակելիս հիմնվել ենք Արևելյան Եկեղեցիների Կանոնագրքի պահանջների, Առաջնորդության ֆինանսատնտեսական համակարգի 2025թ. հունվարին գերմանական Empacta աուդիտորական ընկերության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքների և առաջարկությունների, ինչպես նաև՝ Ամերիկյան կաթողիկէ եպիսկոպոսների խորհրդի՝ USCCB-ի “DIOCESAN FINANCIAL MANAGEMENT (A GUIDE TO BEST PRACTICES)” ուղեցույցից:

հնարավորինս շուտ: Մտահոգությունների վերաբերյալ զեկույցները պետք է ներառեն ողջ համապատասխան տեղեկատվությունը ենթադրյալ արարքի մասին, ներառյալ ցանկացած առկա նյութական (էական) ապացույց:

Հալածանքների և վրեժխնդրության արգելք

Սույն քաղաքականությունը նպատակ ունի խրախուսել և հնարավորություն տալ շահառուներին բարձրաձայնել Մտահոգությունները կազմակերպության ներսում՝ հետաքննություն և համապատասխան գործողություններ իրականացնելու նպատակով: Այս նպատակն ի նկատի ունենալով՝ ոչ մի շահագրգիռ անձ, ով բարեխղճորեն (բարի կամքով) զեկուցում է Մտահոգության մասին, չպետք է ենթարկվի վրեժխնդրության գործողությունների, իսկ աշխատակցի դեպքում՝ աշխատանքային անբարենպաստ հետևանքների: Ավելին, ցանկացած անձ, ով վրեժխնդիր կլինի բարեխղճորեն Մտահոգություն զեկուցած անձի նկատմամբ, ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև Եկեղեցում իր զբաղեցրած պաշտոնից ազատումը:

Հետաքննություն

Նշանակված Առաջնորդական անձնակազմը պատասխանատու է զեկուցված Մտահոգության մանրակրկիտ և օպերատիվ հետաքննության համար: Գործի վարման վերաբերյալ առաջարկվող որոշումները կքննարկվեն եպիսկոպոսի կամ նրա լիազորված անձի (անձանց) հետ: Զեկուցված բոլոր Մտահոգությունների հետաքննության արդյունքները և վերջնական լուծումը պետք է ներկայացվեն Աուդիտի հանձնաժողովին:

Բարեխղճորեն գործելը

Մտահոգություն զեկուցող ցանկացած անձ պետք է գործի բարեխղճորեն և ունենա հիմնավոր պատճառներ՝ համոզված լինելու, որ բացահայտված տեղեկատվությունը մատնանշում է անպատշաճ հաշվապահական կամ աուդիտորական գործելաոճ, կամ Վարքականոնի կամ կառավարման այլ քաղաքականությունների խախտում: Այնպիսի մեղադրանքներ (հայտարարություններ) ներկայացնելը, որոնք կլինեն չհիմնավորված և կապացուցվի, որ արվել են չարամտորեն, անփութորեն կամ կանխավ գիտակցելով, որ դրանք կեղծ են, կդիտվի որպես ծանր կարգապահական խախտում և կարող է հանգեցնել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև Եկեղեցում իր պաշտոնից ազատում: Նման վարքագիծը կարող է հիմք հանդիսանալ նաև այլ գործողությունների, այդ թվում՝ քաղաքացիական դատական հայցերի համար:

Գաղտնիություն

Մտահոգությունների վերաբերյալ զեկույցները և դրանց առնչվող հետաքննությունները պետք է պահվեն գաղտնի՝ որքանով դա հնարավոր է՝ համապատասխանեցնելով պատշաճ հետաքննություն իրականացնելու անհրաժեշտությանը: Մտահոգությունների վերաբերյալ զեկույցների բացահայտումը հետաքննության մեջ չներգրավված անձանց կդիտվի որպես ծանր կարգապահական խախտում և կարող է հանգեցնել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև խախտողի՝ Եկեղեցում զբաղեցրած պաշտոնից ազատումը: Նման վարքագիծը կարող է հիմք հանդիսանալ նաև այլ գործողությունների, այդ թվում՝ քաղաքացիական դատական հայցերի համար:

Մտահոգությունների կամ իրավախախտումների ազդարարման մասին զեկույցների ցանկագրման ձև					
Զեկուցման օրը, ամիսը, տարին	Հերթական թիվը	Մտահոգության կամ իրավախախտման նկարագրությունը	Ներկայացված է՝ - հոգևորականի, - կրոնավորի - աշխարհական աշխատակցի, - համայնքի անդամի, - ծառայություն մատուցողի, - այլ շահագրգիռ անձի կողմից	Ներկայիս կարգավիճակը՝ - լուծված - հետաքննության փուլում է, - ավարտված է, - հանված է, - առկախված է:	Ձեռնարկված միջոցներ՝ ժամանակներով և այլ անհրաժեշտ մեկնաբանություններով

Երևան, 18 հուլիսի, 2026թ.

Հաստատում եմ

✠ ԳԷՈՐԳ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
Տիտղոսաւոր Արքեպիսկոպոս Սեբաստիոյ Հայոց
Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի
եւ Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց

Տ. ՅՈՎՍԷՓ ՔՀՆՅ. ԳԱԼՍՏԵԱՆ
Դիւանապետ Առաջնորդութեան